ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2024 թվական, N 106-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) ենթակետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետով, 3-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, հաշվի առնելով, որ փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հիմք ընդունելով Սուրեն Սիմոնի Պետրոսյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, մատակարար կազմակերպությունների համաձայնությունը, որակավորում ունեցող չափագրող կազմակերպության՝ «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունները, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0023-0117 ծածկագրում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.06 հա մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300քմ հողամասից Սուրեն Սիմոնի Պետրոսյանի կողմից փաստացի ավել զբաղեցված 0.0125 հա մակերեսով հողամասն օտարել փաստացի օգտագործողին՝ հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի չափով:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
17.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
18.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
19.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
20.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
21.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
22.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
23.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
24.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
25.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
26.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
27.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
28.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
29.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
30.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
31.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
32.	ՏԻԳՐԱՆ	ՊԱՊՈՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., սեպտեմբերի 13,
Լոռու մարզ, ք. Ալավերդի